Մ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՈՎՀ. ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՏԵՂԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՈՎՀ. ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հայ ժողովրդի մեծ զավակ, աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհ. Այվազովսկին խոշոր տեղ է գրավում հայկական կերպարվեստի պատմության մեջ։

Հովհ. Այվազովսկին հայկական ծովանկարչության հիմնադիրն է։ Հանդես գալով անցյալ դարի 30—40-ական թվականներին և այնուհետև մինչև դարի վերջը՝ ավելի քան 60 տարի շարունակ ստեղծագործելով, Այվազովսկին ստեղծում է շուրջ 6000 պատկեր, որոնց մեծագույն մասը ծովանկարներ են։

Հովհ. Այվազովսկին նկարել է աշխարհի շատ ծովեր և օվկիանոսներ՝ Բալթիկ, Սև և Կասպից ծովերը, Միջերկրական ծովը, Ատլանտյան և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսները, տարբեր երկրների լճեր, գետեր և ջրանցքներ, ինչպես, օրինակ՝ Սևանա լիճը, Լադոգան, Նեվա, Մոսկվա, Վոլգա, Դանուբ, Ռիոն, Թերեք գետերը, Սուեզի ջրանցքը, Դարդանելի նեղուցը, Նիագարայի ջրվեժը։ Նա նկարել է բազմաթիվ ծովափնյա, գետափնյա, լճափնյա տեսարաններ, հեղեղներ և վերջապես «Համաշխարհային ջրհեղեղը», որոնք պատկերում են աշխարհի տարբեր երկրների ծովային բնությունը։

Նրա ծովանկարների թեմատիկան և ներկայացրած աշխարհը չափազանց լայն է և հարուստ։ Նա չի սահմանափակվել միայն մեկ երկրի ծովային տեսարանները պատկերելով, ինչպես փորձում են ներկայացնել նրան, այլ ընդգրկել է շատ և տարբեր երկրների ջրային տարածություններ։ Դա շատ հատկանշական է հայկական նկարչության և ընդհանրապես XIX դարի ազգային գեղարվեստական մշակույթի համար։

Հայ ժողովրդի պատմական բախտը անցյալում եղել է այնպիսին, որ ժողովրդի մի մասը, ինչպես և նրա մշակույթի շատ գործիչներ, ստիպված են եղել ապրել ու ստեղծագործել բուն հայրենիքից դուրս՝ հարևան ու հեռավոր երկրներում։ Դա իր կնիքն է թողել առանձնապես բնանկարչության վրա։ Այդ, ամենից առաջ, արտահայտվել է այն բանում, որ հայ նկարիչները, համարյա բոլորն էլ, նկարել են նաև օտար, նույնիսկ շատ հեռավոր երկրների բնության տեսարաններ։ Օտար երկրների ցամաքային և ծովային բնության մի շարք պատկերներ են նկարել Գ. Բաշինջաղյանը, Փ. Թերլեմեզյանը, Ե. Թադևոսյանը, Հմ. Հակոբյանը, Վ. Սուրենյանը, Հ. Շամշինյանը, Ս. Աղաջանյանը, Ս. Խաչատրյանը, Ա. Ֆետվաճյանը, վերջապես Մ. Սարյանը, որոնց ստեղծագործությունները, իրենց ոճական առանձնահատկություններով հանդերձ, ամենայն իրավամբ, վաղուց ի վեր մտել են հայ կերպարվեստի մեջ և կազմում են նրա օրգանական մասը։ Տարբեր երկրների բնության և ծովային տեսարաններ ներկայացնող Հովհ. Այվազովսկու պատկերները նույնպես, ամենայն իրավամբ, մտնում են հայ կերպարվեստի մեջ և կազմում են նրա օրգանական մասը։

Սովետական արվեստագիտությունը վաղուց հաստատել է, որ ազգային նկարիչները օտար բնությունը տեսել են իրենց աչքերով և պատկերել են այն իրենց ազգային ոգով։ Այդ ճիշտ թեզը ռուս արվեստաբաններն օգտագործում են առանձնապես այն նկարիչների նկատմամբ, որոնք նկարել են օտար բնության տեսարաններ, ինչպես, օրինակ՝ Սիլվեստեր Շչեդրինը, որն ապրել ու ստեղծագործել է Իտալիայում և նկարել է գերազանցապես իտալական ծովափնյա տեսարաններ (Սորենտո, Նեապոլի ծովափնյա տեսարաններ և այլն)։

Այդ նույնը կարելի է ասել նաև հայ նկարիչների մասին։ XIX դարում հայկական նկարչությունը և հայրենասիրական զգացումները մեր նկարիչների մոտ և նրանց ստեղծագործություններում այնքան ուժեղ և բարձր են եղել, որ նույնիսկ այն ռեալիստ նկարիչները, որոնք Հայաստանում երբեք չեն եղել և նկարել են գերազանցապես ուրիշ (օտար) երկրների բնության տեսարաններ, պահպանել են իրենց ազգային հատկանիշը, իրենց հայկական-արևելյան ոգին, մտքերն ու զգացումները։ Այդպիսին է, օրինակ, ծովանկարիչ Վ. Մախոխյանը, որն իր ամբողջ կյանքում ապրելով ու ստեղծագործելով Գերմանիայում և Ֆրանսիայում, երբեք չօտարացավ։ Դա նկատել են նույնիսկ իրենք՝ գերմանացի արվեստաբանները, որոնցից մեկը՝ Ֆիլիպ Պերկերը, ուղղակի գրել է. «Հակառակ անոր ստացած գերմանական զարգացումին և Գերմանիո համար ունեցած հաստատուն նախասիրության, արվեստագետը գերմանացի մը չեղավ երբեք»[1]։

Հովհաննես Այվազովսկու ծովանկարները ուսումնասիրելիս, արվեստաբանները վաղուց նկատել են, որ նրանց մեջ շատ բան եկել է արևելքից։ Մեծ ծովանկարչի համարյա բոլոր կենսագիրներն էլ նշում են այն փաստը, որ Այվազովսկուն ամենից ավելի հաջողվել է նկարել արևելյան, ինչպես նրանք են գրում՝ հարավի, ծովային բնության տեսարաններ։ «Նրա պատկերների մոտիվները, — գրում է նկարչի ժամանակակից կենսագիր Ն. Կուզմինը, — նման և ճշմարիտ են վերարտադրել հարավային բնության գույները»[2]։ «Հարավային գիշերվա, երկնքի, հարավային արևամուտի հրապույրը, սարսափը, մարդու հոգու վրա ազդող փոթորիկը կամ մրրիկը ահա այն զգացմունքները, որոնք ոգևորում են ինձ, երբ ես նկարում եմ», — ասել է նկարիչը իր ինքնակենսագրականում[3]։ Նկարիչ Գ. Բաշինջաղյանը գրում է, որ Այվազովսկին իր լավագույն ստեղծագործություններում արտահայտում է «իսկական արևելքը»[4]։ «Այվազովսկին, որ մանկուց ընտելացել էր արևի շողերով հագեցված օդին և մեծացել տոթակեղ հարավում, ցանկանում էր կտավի վրա ավելի գունեղ բնություն պատկերել, քան այդ անում էին նրա նախորդները» հաստատում է նկարչի հետագա տարիների կենսագիրը[5]։

Իսկապես. երբ դիտում ենք Այվազովսկու ծովանկարները, առանձնապես վաղ շրջանի նրա գործերը, անմիջապես ուշադրություն է գրավում նրանց գունեղությունը։ Ջերմ, վառվռուն գույները, հատկապես կարմիր, նարնջավուն, դեղին և մյուս տաք գույները աչքի են ընկնում նույնիսկ փոթորկի կամ ալե-

1 «Շանթ», 1912, էջ 352։
2 Н. Кузьмин, И. К. Айвазовский и его произведения, 1901, стр. 85.
3 «Русская старина», 1881, т. 31.
4 «Кавказское слово», 1917, № 179.
5 Н. С. Барсамов, И. К. Айвазовский, 1950, стр. 7.

կոծման տեսարան ներկայացնող նկարներում, որոնց մեջ կարելի է նկատել նույնիսկ որոշ հակասություն բնության տվյալ ողբերգական վիճակի և նկարչի կիրառած ջերմ ու հնչեղ (մաժոր) գույների միջև, ինչպես, օրինակ, «Իններորդ ալիքը» պատկերը (1850)։ Ծովանկարների այդօրինակ գունեղությունն իր մեջ կրում է արևելյան տարր և շատ բան գալիս է հենց Հովհ. Այվազովսկու ազգային խառնվածքից։

Ժամանակակից ռուս նկարիչներն իրենք իսկ խոստովանում են, որ ռուսական բնանկարչությունը, մինչև Այվազովսկու հանդես գալը, ծովային բնության այդօրինակ գունեղ և ջերմ կոլորիտով պատկերներ չուներ։ «Ես առաջին անգամ տեսա գույների այնպիսի փայլ կտավի վրա, որ նույնիսկ մոռացա Տյորներին։ Կապույտ, կանաչ, սպիտակ, մոխրագույն և կարմիր պատկերներն ինձ ուղղակի կուրացրին,— գրում է ռուս նշանավոր ծովանկարիչ Ա. Բոգոլյուբովը 1856 թ. վկայելով, որ,—«այն ժամանակ մեր շրջանում արդի բնակիչների մեջ չկար մեկը, որ ունենար այնպիսի գույներ, ինչպես նա»[6]։ «Այդ ժանրի մեջ Այվազովսկին չի ունեցել նշանավոր նախորդ Ռուսաստանում»,— գրում է «Իզվեստիա» պաշտոնական թերթը 1967 թ. հուլիսի 28-ին, ավելացնելով, որ Այվազովսկին «երբեք ոչ ոքի չի նմանվել»[7]։ Այո՛, Այվազովսկին երբեք ոչ ոքի չի նմանվել։ Բայց նրա՛ն են նմանվել կամ փորձել են նրա՛ն նմանվել։ Դրա համար էլ արվեստաբանության մեջ նրա ժամանակից սկսած մինչև մեր օրերը գործածվում է մի արտահայտություն, որը կոչվում է «ala Այվազովսկի» («Այվազովսկու նման»)։ Այս փաստը նույնպես, ասում է այն մասին, որ Այվազովսկին, իրոք, նորություն էր ռուս նկարիչների շրջանում և այդ նորությունը գալիս էր արևելքից, ինչպես նրանք են գրում՝ հարավից, հարստացնելով ռուս և համաշխարհային նկարչությունը։ Դա նշանակում է, որ Այվազովսկին Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում սովորելով նկարչություն, այստեղ ձեռք բերելով պրոֆեսիոնալ ունակություններ, հետագայում իր սեփական աշխատանքով և համաշխարհային նկարչության նվաճումները ուսումնասիրելով, կատարելագործեց իր արվեստը և դարձավ ծովի անզուգական նկարիչ։

Հովհ. Այվազովսկու ստեղծագործություններում նկատվող այդ արևելյան-հայկական տարրը արտահայտվում է ոչ միայն նրա պատկերների բովանդակության, մոտիվների կամ տեմպերամենտի մեջ, այլև ծովային տարերքի ինքնօրինակ, յուրատիպ մեկնաբանության և հատկապես կոլորիտի մեջ։ Իր այդ արևելյան-հայկական առանձնահատկություններով էլ Հովհ. Այվազովսկին մտնում է հայ ազգային նկարչության պատմության մեջ որպես հայկական ծովանկարչության հիմնադիր։ Նա միաժամանակ մտնում է ռուս և համաշխարհային արվեստի պատմության մեջ, որպես մեծադույն նկարիչ, որը խոշոր չափով նպաստել է ծովանկարչության արվեստի զարգացմանը։

Սկիզբ դնելով հայկական ծովանկարչությանը Հովհ. Այվազովսկին, միաժամանակ, ամեն կերպ նպաստել է ծովանկարիչների նոր կադրերի պատրաստմանը հայ կերպարվեստի մեջ։ Մեծ նկարչի տունը և նրա արվեստանոցը եղել են երիտասարդ նկարիչների այցելության և ուսումնառության կարևոր օջախ։ Այստեղ՝ Այվազովսկու բացած նկարչական դպրոցում, ծովանկարչություն են սովորել հայ, ռուս և այլազգի շատ նկարիչներ, այդ թվում ծովանկարիչ

---

6 «Русская старина», ж., 1888, № 2

7 «Известия», г., 1967,

էմ. Մահտեսյանը, Հուսիկյանը և ուրիշներ։ Մասնագիտանալով ծովանկարչության ժանրում էմանվել Մահտեսյանը (1857—1908) 1895 թ. Սիմֆերոպոլ քաղաքում բացում է 150 ծովանկարներից բաղկացած մի ցուցահանդես, որից մեկ հասած «Ալեկոծ ծովը» (1895) և հետագայում նկարած «Տեսարան առագաստանավով», «Փոթորիկ ծովի վրա» (1898) և նրա մյուս ստեղծագործությունները պարզորոշ ցույց են տալիս, որ իրենց առանձնահատկություններով հանդերձ, նրանք ներկայացնում են Այվազովսկու ծովանկարչության դպրոցը։

Այվազովսկու ծովանկարչական դպրոցի ականավոր ներկայացուցիչն Լ. Գ. Բաշինջաղյանը (1857—1925)։ Իր ինքնակենսագրականի մեջ նա գրում է, որ դեռևս 1870-ական թվականներին «Ինձ վրա առաջին ուժեղ էսթետիկական տպավորությունն են թողնում Այվազովսկու երկու պատկերները, որոնք գտնվում էին կովկասյան թանգարանում»։ Հետագայում Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում ուսանելիս նա հաճախ է այցելում մեծ ծովանկարչին և ներկա է լինում նրա աշխատանքի ժամերին։ «1882 թվականին էր, որ դիմեցի նրան Պետերբուրգում իբրև ակադեմիայի ուսանող,— գրում է Բաշինջաղյանը Այվազովսկու մասին հրապարակած իր բազմաթիվ հոդվածներից մեկում,— և նա ինձ բարի խորհուրդներ տալուց հետո առաջարկեց մի-մի անգամ այցելել նրան, որպեսզի ներկա լինեմ աշխատության միջոցին»։ Երիտասարդ նկարիչը այցելում է Այվազովսկուն, ցույց է տալիս իր աշխատանքները և, ինչպես Բաշինջաղյանն է գրում, Այվազովսկին «խորհուրդներ էր տալիս, երեսին էր ասում լավն ու վատը, չէր ծածկում իր կարծիքը, թեև գիտեր, որ սիրտ պետք է ցավեցնի, բայց գովաբանում էր, երբ հարկավոր էր համարում»։ Աշխատելով Այվազովսկու խորհուրդներով ու նրա բարերար ազդեցությամբ Բաշինջաղյանը հետագայում ստեղծում է Սևանա լճի, Կասպից և Սև ծովերի ինքնուրույն պատկերներ, գետափնյա ու լճափնյա տեսարաններ, ինչպես, օրինակ «Սևանա լիճը և կղզին» (1884), «Վենետիկի ս. Ղազար կղզին գիշերով» (1892), «Սևանա լիճը» (1896), «Անձրևային օր Սևանում» (1898), «Կասպից ծովը» (1912), «Ծովի տեսարան» (1919), «Գյոլ-գյոլ լիճը», «Բաթումի ծովածոցը գիշերով» և ուրիշներ, հայկական ծովանկարչությունը հարստացնելով հայրենի բնության և կովկասյան ծովային տեսարանների նոր պատկերներով։

Անցյալ դարի 90-ական թվականներին Մյունխենի գեղարվեստի ակադեմիան ավարտած ծովանկարիչ Վարդան Մախոխյանը (1869—1937) Գերմանիայից մեկնում է Կովկաս, այցելում Ղրիմ և երկար զրուցում է Այվազովսկու հետ ծովանկարչության հարցերի շուրջը։ Այստեղ եղած ժամանակ նա նկարում է ծովանկարներ և ցույց տալիս մեծ վարպետին՝ լսելով նրա խորհուրդները։ Հետագայում նա ամբողջապես նվիրվում է ծովանկարչությանը և ստեղծում է բազմաթիվ ու բարձրարվեստ ծովանկարներ, որոնցից Հայաստանի պետական պատկերասրահում գտնվող «Մակնթացություն», «Ծովանկար» (1898), «Անհանգիստ ծովը» և «Ծովային տեսարան» (1905) պատկերները և արևմտա-եվրոպական երկրների տարբեր թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում գտնվող նրա բարձրարվեստ ծովանկարները խոսում են նկարչի խոշոր տաղանդի և հայկական ծովանկարչության ժանրի ընդլայնման մասին։

Այվազովսկու ազդեցությունն առանձնապես ուժեղ է եղել արևմտահայ նկարիչների վրա։ Հաճախակի լինելով Կոստանդնուպոլսում և այնտեղ կազմակերպած իր ցուցահանդեսներով Այվազովսկին նվաճել էր պոլսահայ նկա-

բիչների մեծ սերն ու հարգանքը։ XIX դարի վերջին քառորդում Պոլսում հանդես են գալիս մի շարք ծովանկարիչներ, որոնցից մի քանիսը ստեղծում են ծովանկարներ Այվազովսկու պատկերների նմանողությամբ։ Ծովանկարիչ Մկրտիչ Ճիվանյանը (1848—1906) նույնիսկ իր պատկերների տակ դնում է Այվազովսկու անունը, դրանք արագ ու բարձր գներով վաճառելու համար։ Նկատելով այդ, Այվազովսկին 1874 թ. Կ. Պոլսում եղած ժամանակ ասում է նկարիչ Ս. Յազըճյանին. «Այդ տղան հիանալի վրձին ունի, բայց ափսոս որ փչացնում է»։

Խրախուսելով ծովանկարչությունը Այվազովսկին, միաժամանակ, դեմ էր նմանողությանը։ Այստեղ՝ Կ. Պոլսում, հայ նկարիչների ու մտավորականության հետ ունեցած հանդիպման ժամանակ աշխարհահռչակ վարպետը երիտասարդ արվեստագետներին խորհուրդ էր տալիս հեռու մնալ նմանողականությունից։ Նա պահանջում էր սովորել մեծ վարպետներից, բայց նկարել բնությունից, չծուլանալ, անընդհատ աշխատել։ Ժամանակակիցները վկայում են, որ քաջալերելով երիտասարդ ծովանկարիչ Տորք Զաքարյանին, Այվազովսկին «Տորքին ցույց կուտա Վոսփորի տեսարանները, ըսելով «փոքրիկ վարպետ, ահա քո դպրոցը, մեծագույն դպրոցդ բնությունը»։ Բնությունից նկարելը և բնության ուսումնասիրությունը ռեալիստական արվեստի պահանջ էր, և Այվազովսկին հայ երիտասարդ նկարիչների ուշադրությունը մղելով ճիշտ ուղղությամբ, նպաստել է ռեալիստական ծովանկարչության զարգացմանը հայ կերպարվեստի մեջ։ Այդ նույն ուղղությամբ են ընթացել նաև հայ անվանի ծովանկարիչներ Արսեն Շարանյանի (1864—1949), Կարապետ Ադամյանի (1872—1947), Փ. Թերլեմեզյանի և մյուսների ստեղծագործությունները։

Այսպիսով, Այվազովսկու բարերար ազդեցությամբ և նրա հայրական հոգատարության շնորհիվ XIX դարում հայ կերպարվեստի մեջ հանդես են գալիս մի խումբ ծովանկարիչներ՝ Գ. Բաշինջաղյանը, Է. Մահտեսյանը, Վ. Մախոխյանը, Մ. Ճիվանյանը, Տ. Զաքարյանը, հետագայում՝ Փ. Թերլեմեզյանը, Ա. Շարանյանը, Կ. Ադամյանը և ուրիշներ, որոնց մեծագույն մասը ներկայացնում է Այվազովսկու ծովանկարչության դպրոցը։

Խոշոր է Հովհ. Այվազովսկու տեղը և նշանակությունը հայ կերպարվեստի մեջ նաև հայկական թեմաներով պատկերների ստեղծման գործում։ Հովհ. Այվազովսկին նկարել է Հայաստանի բնության տեսարաններ, հայ ժողովրդի կյանքի, կենցաղի, պատմական անցյալի թեմաներով պատկերներ և հայ մարդկանց բազմաթիվ դիմանկարներ։

Հայաստանի բնության տեսարաններ պատկերող նրա ստեղծագործություններից, ամենից ավելի, հայտնի են Արարատ լեռան, Արարատյան դաշտի և Սևանա լճի պատկերները։ Այվազովսկին Արարատը և Արարատյան դաշտը նկարել է բազմիցս։ Դեռևս 1868 թ. Անդրկովկասում կատարած ճանապարհորդության ժամանակ նա նկարում է Արարատի և Սևանի գեղատեսիլ բնության պատկերներ, որոնք 1868—1869 թթ. ձմռանը ցուցադրում է հայ մշակույթի խոշոր օջախ Թիֆլիսում բացած իր պատկերահանդեսում։ Մինչև այդ հայ պրոֆեսիոնալ նկարիչներից ոչ ոք չէր նկարել Արարատը և Սևանա լիճը։ Նկարիչ-հայերից Այվազովսկին առաջինն էր, որ 1868 թ. նկարելով հայրենի բնության տեսարաններ, իր բարձր արվեստով ցույց տվեց հայրենիքի գեղեցկությունը և սրեց հայ հասարակության և երիտասարդ նկարիչների հետաքրքրությունը Հայաստանի բնության նկատմամբ։

Արարատի և Արարատյան դաշտի թեմային հայրենասեր նկարիչը անդրադարձել է նաև հետագայում՝ 1880-ական թվականներին։ Մեզ հասել են 1882 թ. նկարած «Արարատ լեռան հովիտը» և «Արարատ» պատկերները, որոնցից առաջինը գտնվում է Մոսկվայում[8], մյուսը՝ Մխիթարյանների միաբանության գրադարանում (Վենետիկ, ս. Ղազար կղզի)։ «Արարատ լեռան հովիտը» ներկայացնում է Արարատյան դաշտը վաղ առավոտյան։ Նկարիչը ճշմարտորեն վերարտադրել է արագ անցնող վաղորդյան մթությունը բնանկարում։ Առաջին պլանում նկարված ճանապարհով անցնող ուղտերի քարավանը և տեղական, ազգային տարազով մարդկանց ֆիգուրները ավելի կենդանի ու բովանդակալից են դարձնում տեսարանը։ Երկրորդ նկարում Այվազովսկին ավելի համոզիչ ու առարկայական է ներկայացրել Արարատը։ Սա արդեն մի մոնումենտալ կերպար է։ Նա վերարտադրված է ծավալային ու նյութական, մոտ ու հարազատ մարդուն, գեղեցիկ՝ իր բնական ձևերի մեջ։ Հայրենի բնության տեսարանն այստեղ ոգեշնչված է և ներծծված հայրենասիրական զգացմունքով։

Նկարչի հայրենասիրությունն արտահայտվել է նաև նրանում, որ այդ պատկերների տակ Այվազովսկին ստորագրել է հայերեն «Այվազեան»։ Այվազովսկին տարբեր տարիների մի շարք աշխատանքների տակ սիրով ստորագրել է մայրենի լեզվով, դրանով իսկ որոշակի ցուցադրելով իր ազգային պատկանելությունը։ Այստեղ ավելորդ չի լինի ասել, որ Հովհ. Այվազովսկին հիանալի իմացել է հայերեն լեզուն։ Նա գրել, կարդացել ու խոսել է մայրենի լեզվով։ Մեզ հասել են հայերեն գրած ավելի քան 15 նամակ և գրություններ, որոնց տակ նա հստակ ձեռագրով ստորագրել է «Հովհաննես Այվազովսկի» կամ «Հովհաննէս Այվազեան»։

«Արարատի» պատկերները նկարչի հայրենասիրության արդյունք են։ Խորը հայրենասիրություն կա նաև Աստվածաշնչի սյուժեներով Արարատը ներկայացնող նրա մի շարք ստեղծագործություններում։ Հանրահայտ են «Համաշխարհային ջրհեղեղը» թեմայով նրա բազմաթիվ պատկերները, որոնցից մեկը՝ «Նոյը իջնում է Արարատից», այժմ ցուցադրվում է Հայաստանի պետական պատկերասրահում։ Այս պատկերը, որը ներկայացնում է Արարատյան դաշտը, դիտողի վրա թողնում է ուժեղ տպավորություն։ Նա խորապես զգացողական է և աչքի է ընկնում օդային, արծաթավուն գամմայով։ Որ այս պատկերի մեջ մեծանուն նկարիչը ձգտել է ցույց տալ հայրենի բնությունը, հայ ժողովրդի բնօրրանը՝ մայր Հայաստանը, այդ մասին մենք ունենք ժամանակակցի վկայությունը։ Փարիզում բացած Այվազովսկու ցուցահանդեսի մասին «Բազմավեպ» ամսագրի թղթակիցը 1889 թ. գրում է. «Ես հանդարտությամբ կդիտեի նկարը, երբ հանկարծ մոտեցավ ինձի նկարչապետն ու ըսավ.

— Անշուշտ հայկական նյութ մը կփնտրես իմ նկարացս մեջ.

— Այո, տեր, լավ գուշակեցիք միտքս.— պատասխանեցի։

Ու տարավ զիս սրահին մեջ ու ցուցուց հեռուեն և ըսավ.

— Ահա մեր Հայաստանը»[9]։

Դա «Նոյը իջնում է Արարատից» պատկերն էր։

Այսպիսով, Այվազովսկին նկարել է Հայաստանի բնության պատկերներ, սրելով հայ հասարակության և նկարիչների ուշադրությունը հայրենի գեղա-

---

8 Այն պատկանում է ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Մ. Մակսակովային։

9 «Բազմավեպ», 1889, էջ 176—177։

տեսիլ բնության վրա։ Եթե նկատի ունենանք նաև այն, որ իր գործունեության տարբեր շրջաններում հանճարեղ ծովանկարիչը նկարել է նաև կովկասյան բնության բազմաթիվ պատկերներ, ինչպես, օրինակ՝ «Դարյալի կիրճը», «Կազբեկ», «Կովկասյան լեռնաշղթան», «Ձյան փլված ռազմավիրական ճանապարհին», «Գունիբ» և ուրիշները, ապա համարձակ կարելի է ասել, որ իր այդ ցամաքային բնության պատկերներով Այվազովսկին խոշոր չափով նպաստել է հայկական բնանկարչության կազմավորմանը XIX դարի ազգային կերպարվեստի մեջ։ Այդ տեսակետից ուշագրավ է այն փաստը, որ Գ. Բաշինջաղյանը նույնպես նկարել է «Դարյալի կիրճը» հենց այն դիտակետից, ինչ տեղից Այվազովսկին է նկարել, սակայն այն տարբերությամբ, որ եթե Այվազովսկու նկարում ավելի շատ տեղ է հատկացված լեռնային գետին՝ նրա ջրային տարածությանը, ապա Բաշինջաղյանի մոտ իշխում են նույն տեսարանի լեռնային հատվածները։

Բացի բնության տեսարաններից Այվազովսկին հայկական կերպարվեստը հարստացրել է նաև մեր ժողովրդի կյանքն ու կենցաղը արտացոլող մի շարք պատկերներով։

1868 թ. լինելով հայ մշակույթի խոշոր կենտրոն Թիֆլիսում, Այվազովսկին նկարում է այստեղի ժողովրդական կյանքի ու կենցաղի թեմայով մի պատկեր, որը հայտնի է «Թիֆլիս» անունով։ Նա ներկայացնում է մերձքաղաքային կանաչավետ վայրերում մի խումբ տղամարդկանց ու կանանց ուրախ ժամանցի տեսարան։ Այստեղ բնության տեսարանը, մարդկանց ու նրանց ազգային տարազը Այվազովսկին նկարել է բնականից և սուր դիտողականությամբ։ Ակամայից հիշում ես այդ ժամանակ Թիֆլիսում ապրող հայ նկարիչներ Հակոբ Հովնաթանյանի և Ստեփան Ներսիսյանի ստեղծագործություններում պատկերված մարդկանց կերպարները։ Բնավ էլ պատահական չէ, որ հենց նույն այդ շրջանում՝ 60-ական թվականներին, Ս. Ներսիսյանը նկարել է «Ժամանց Քուռ գետի ափին» կենցաղային թեմայով մեծակտավ նկարը, որը նույնպես ներկայացնում է Թիֆլիսի մերձքաղաքային տեսարան՝ խնջույքի նստած մարդկանց պատկերներով։ Այն փաստը, որ Այվազովսկին և Ներսիսյանը միևնույն շրջանում նկարել են քաղաքի շրջակայքում մարդկանց խնջույք-ժամանցի թեմաներով երկու առանձին պատկերներ, ասում է այն մասին, որ այդպիսի ժամանցները շատ բնորոշ և հատկանշական են եղել այդ քաղաքի բնակիչների կենցաղում։ Այսպիսով, Այվազովսկու այդ պատկերը, որը արտացոլում է մեր ժողովրդի կենցաղի մի դրվագ և ունի կենցաղային բովանդակություն, Ս. Ներսիսյանի վերոհիշյալ ստեղծագործության հետ մտնում է XIX դարի հայ կերպարվեստի պատմության մեջ, որպես հայկական ռեալիստական կենցաղային նկարչության առաջին ստեղծագործություններից մեկը։

Հայ ժողովրդի ժամանակակից կյանքի թեմաներով ստեղծագործություններից հանրահայտ են հայկական ջարդերին նվիրված նրա «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թվականին», «Հայերին լցնում են նավերը» և «Կենդանի հայերին թուրքերը թափում են Մարմարա ծովը» երեք առանձին պատկերները։ «Հայերի ջարդը Տրապզոնում 1895 թվականին» պատկերում է իրական փաստ՝ Տրապիզոնի ծովափնյա շրջանը, որտեղ սուլթան Համիդի բաշիբոզուկները սրերով կոտորում են անզեն հայերին։ Ծովափին թափված են բազմաթիվ դիակներ, իսկ մարդկանց արյունը պատել է ամբողջ ծովեզրը։ Ծովը հանդարտ է. նա կարծես սառել է կատարվող եղեռնագործությունից։ Ավելի ծանր, սար-

սուր առաջացնող նկար է եղել մյուսը, որը պատկերում է կենդանի հայերին թուրքերը ողջ-ողջ նետում են Մարմարա ծովը։ Այդ պատկերները մեզ, դժբախտարար, չեն հասել։ Բայց դրանք ժամանակին ցուցադրվել են Օդեսայում, Մոսկվայում, Պետերբուրգում և այլ քաղաքներում, ամենուր ցնցող տպավորություն գործելով դիտողների վրա։ «Տրապիզոնի կոտորածը սարսափելի է,— գրում է «Մշակ» թերթի թղթակիցը 1898 թ. Մոսկվայից, նշելով Մոսկվայի ցուցահանդեսում եղած վերոհիշյալ պատկերները,— մարդկանց ոչ թե կոտորում, այլ սաղ-սաղ ածում են ծովը... Մարդիկ փախչում են, բայց ո՞ւր... մարդիկ աղաչում են, բայց ո՞ւմ... Առանց արտասվելու չի կարելի երկար դիտել այդ դժբախտ զոհերին»։

1896 թ. խրիմյան Հայրիկին ուղղած նամակներից մեկում Այվազովսկին հայտնում է իր խոր ցավը հայկական ջարդերի կապակցությամբ և միաժամանակ պատրաստակամություն է հայտնում կատարելու կաթողիկոսի «շատ զգայուն և գեղեցիկ առաջարկությունը... նկարել կարմիր գույնով հայոց կոտորածի պատկեր, արյան դաշտեր և լեռներ և վշտահար հայոց Հայրիկին ավերակաց վրա։ Եթե տերը կհաճի ինձ դեռևս կյանք պարգևել, կուգա օր, որ կկատարեմ այդ սրտաշարժ առաջարկությունը»։ Այդ նամակում Այվազովսկին գրում է. «Այո, խորին ցավով վշտացած է սիրտս անբախտ հայոց չլսված, չտեսնված կոտորածով։ Դուք այդտեղ, մենք այստեղ և ամենքն իրենց տեղեր, կուլանք և կողբանք մեր թշվառ, կորստյան մատնված հայոց վրա և կմաղթենք աստվածային գթություն։ Ձեր վեհափառության խոնարհ ծառա և որդի Հովհաննէս Այվազովսկի»։

Գեղարվեստորեն պատկերելով ջարդերի իրական տեսարաններ, Այվազովսկին դրանով իր զայրույթն է արտահայտում Թուրքիայի բարբարոսության նկատմամբ և ցուցադրելով դրանք Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի մայրաքաղաքներում, հրավիրում է հասարակության լայն շրջանների ուշադրություն ջարդերի վրա՝ պաշտպանելով հարազատ ժողովրդի շահերը։ Ավելին։ Համակված իր ժողովրդին նաև նյութապես օգնելու ցանկությամբ, Այվազովսկին վաճառված իր ծովանկարների հոնորարը, ինչպես և ցուցահանդեսների մուտքի դումարը նվիրում է Թուրքիայում տուժած իր հայրենակիցների օգնության ֆոնդին։ Նա, միաժամանակ, Ղրիմում ունեցած իր կալվածներից հողամասեր ու բնակելի տարածություններ է հատկացնում հայ գաղթականներին։

Հայկական ջարդերի ծանր տարիներին Հովհ. Այվազովսկու ցուցաբերած որդիական այդօրինակ հոգատարությունը նրա մեծության ցուցանիշներից մեկն է։ Պետք է նկատել, որ այդ ժամանակ Ռուսաստանում գործող բազմաթիվ նկարիչներից Հովհ. Այվազովսկին միակն էր, որն իր ստեղծագործություններով անդրադարձավ հայկական ջարդերին։ Հայկական ջարդերին նվիրված նրա պատկերների մեջ խոսում, բողոքում և դատապարտում էր մեր ժողովրդի հարազատ դավակը։ Մի զրույցի ժամանակ նկարիչը ասել է. «Ամոթ է երես դարձնել հարազատ ժողովրդից, մանավանդ որ նա փոքրաթիվ է և ճընշված»։

Աշխարհահռչակ ծովանկարիչը թուրքական բռնակալության դեմ իր զայրույթն արտահայտել է նաև բազմաթիվ ծովանկարներում, մեծ մասամբ հուղումնալից և փոթորկոտ ծովի պատկերներում՝ նրանց մեջ դնելով վտանգի են-

թարկված մարդկանց փրկության հույսի գաղափարը։ Այդ տեսակետից շատ նշանակալից են Այվազովսկու մարտանկարչական պատկերները։

Այվազովսկին նկարել է ռուս-թուրքական պատերազմի թեմաներով բազմաթիվ պատկերներ՝ այդ թվում «Սինոպի ճակատամարտը» (1853), «Կարս քաղաքի գրավումը գիշեր ժամանակ» (1878), «Մերկուրիի» ճակատամարտը թուրքական նավերի դեմ» (1892) և շատ ուրիշներ, որոնց մեջ նա մեծարում է ռուսական զենքի հաղթանակը, ռուս ծովայինների հերոսությունները, ռուսական զենքի հաղթանակի մեջ տեսնելով նաև Թուրքիայում տառապող իր հայրենակից արևմտահայերի ազատագրությունը։

Հովհ. Այվազովսկին ստեղծել է նաև հայ ժողովրդի անցյալի պատմության թեմաներով պատկերներ։ Նրանցից հայտնի են «Հայ ժողովրդի մկրտությունը», որը պատմում է Արարատյան դաշտում Գրիգոր Լուսավորիչի կողմից մեր ժողովրդին մկրտելու պատմական անցքը, ապա «Երդում» պատկերը (1891), որը նկարիչը նվիրել է Ղրիմի եկեղեցիներից մեկին՝ զորավար Վարդան Մամիկոնյանի անվան հայոց եկեղեցուն, և պատկերում է, ամենայն հավանականությամբ, Վարդան զորավարին մարտից առաջ հանդիսավոր երդում տալիս։

Վրաց կերպարվեստի պետական թանգարանում են գտնվում «Կովկասի կանանց փախցնող թուրքական նավի գրավումը ռուս նավաստիների կողմից» (1888) և «Բայրոնի այցը Մխիթարյաններին ս. Ղազար կղզում» մեծակտավ պատկերները։ Առաջինը պատմում է թուրքերի կողմից Կովկասի կանանց փախցրնելու իրական անցքերից մի դրվագ։ Կովկասի ափերից նոր է հեռացել բազմազգ կանանցով լցված թուրքական առագաստանավը, երբ նրա ճանապարհը կտրել է ռուս նավաստիների առաջին ջոկատը։ Թուրքերի և ռուսների միջև տեղի է ունենում հրացանաձգություն, մի քանիսը մերկացրել են սրերը։ Հեռվում երևում են ռուս նավաստիների նոր ջոկատներ, որոնք նավակներով արագորեն մոտենում են պաշարված թուրքական առագաստանավին։ Ռուս նավաստիների հաղթանակը և Կովկասի գերի կանանց ազատագրումը աչքառու է։ Այդ ավելի համոզիչ է դարձնում անհանգիստ ծովի գեղեցիկ տեսարանը, որը ողողված է իրիկնամուտի արևի բոսորագույն ճառագայթներով։

«Բայրոնի այցը Մխիթարյաններին ս. Ղազար կղզում» նկարի մեջ Այվազովսկին պատկերել է հայ ժողովրդի մեծ բարեկամ անգլիացի գրողի հանդիպումը Մխիթարյան միաբանության գիտնականների հետ։ Մեր ժողովրդին և նրա բաղմադարյան մշակույթը խորապես սիրող ու բարձր գնահատող Բայրոնը, որը Մխիթարյանների մոտ հայերեն գրել ու կարդալ է սովորել և նույնիսկ թարգմանություններ է կատարել հայերենից անգլերեն, հայերին համարում էր աշխարհի ամենաքաղաքակիրթ ազգերից մեկը։ «Ինձ դժվար է թվում գտնել մի որևիցե ազգի ժամանակագրություն զերծ մեծ արատներից, որքան հայերի պատմությանը, որոնց առաքինությունները խաղաղության արգասիք են, իսկ թերությունները՝ բռնադատության արդյունք,— գրել է Բայրոնը,— սակայն ինչ էլ եղած լինի նրանց բախտը և ինչ էլ որ կարող է լինել ապագայում և այդ եղել է արդեն դառնագույնը — նրանց երկիրը հավերժորեն ամենահետաքրքրականը պիտի լինի ամբողջ տիեզերքում և թերևս նրանց լեզուն է միայն, որ ինչքան ուսումնասիրվում է, այնքան դառնում է գրավիչ»։ Ահա այդ և նույնպիսի քաղաքակիրթ հույն ժողովրդի ազատագրության համար թուրքական զենքից զոհված Բայրոնի գեղեցիկ կերպարն է նկարել հայրենասեր Այվազովսկին իր

այս պատկերի մեջ։ Երկու ժողովուրդների մշակութային գործիչների մերձեցումը ներկայացնող այս հանդիսավոր տեսարանում Այվազովսկին միաժամանակ արտահայտում է իր ուրախությունը։ Պատկերն աչքի է ընկնում Վենետիկի ծովափնյա բնության և պատմական անձանց (Բայրոն, Ավգերյան, Սոմայյան և ուրիշներ) համոզիչ բնութագրությամբ։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հովհ. Այվազովսկին ստեղծել է հայկական թեմաներով մի շարք սյուժետային պատկերներ, որոնք ամենայն իրավամբ մտնում են հայ կերպարվեստի մեջ և հարստացնում են հայկական կենցաղային ու պատմական նկարչության ժանրերը։

Այս բոլորից հետո մենք ստիպված ենք ափսոսանք հայտնել, որ հայկական թեմաներով վերոհիշյալ պատկերները ռուսական արվեստագիտական գրականության մեջ, վերջին 50 տարում, բոլորովին չեն տպագրվել ու չեն ծանոթացվել ընթերցողներին։ Ռուս ընթերցողը ոչ միայն ծանոթ չէ նրանց մեծ մասի լուսանկարներին, այլև նույնիսկ չգիտե նրանց անունները։ Որոշ հեղինակներ նույնիսկ դիմել են նրանց անունները փոխելու մեթոդին, որը հակագիտական երևույթ է։ Այսպես, օրինակ՝ «Հայ ժողովրդի մկրտությունը» նկարը համարյա ամեն տարի հրապարակվող ցուցակներում նշվում է «Крещение народа» վերնագրով[10], որից, իհարկե, պարզ չէ, թե որ ժողովրդի մկրտությունն է պատկերել նկարիչը։ «Բայրոնի այցը Մխիթարյաններին ս. Ղազար կղզում» նկարը այդ ցուցակներում նշվում է «Байрон на острове св. Лазаря» վերնագրով, որը նույնպես ոչինչ չի ասում, մանավանդ, որ մենագրություններում պարզապես չեն խոսվում նրանց մասին։ Արվեստագիտության մեջ չի կարելի թույլ տալ նման խեղաթյուրում, մանավանդ, որ զուտ հայկական թեմաներով այդ պատկերները պատահականություններ չեն հայ ժողովրդի մեծ զավակի բազմահազար ստեղծագործությունների շարքում։

Հովհ. Այվազովսկին եղել է ու մնում է հայ ժողովրդի մեծ զավակ, անցյալ դարի հայկական նկարչության ականավոր ներկայացուցիչներից մեկը, որն իր հանճարեղ ստեղծագործություններով խոշոր չափով նպաստել է ռուսական և համաշխարհային արվեստի զարգացմանը և դրանով իսկ նվաճել պատվավոր տեղ այլ ժողովուրդների կերպարվեստի պատմության մեջ։

Հայ մշակույթի ժամանակակից շատ ականավոր գործիչներ, այդ թվում Հ. Պարոնյանը, Պ. Ադամյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, Ալ. Ծատուրյանը, Շիրվանզադեն, Լեոն, Եր. Շահազիզը, ժող. դերասան Ա. Արմենյանը և ուրիշներ բարձր են գնահատել Այվազովսկու մատուցած ծառայություններն իր ժողովրդին և պատվավոր տեղ են հատկացրել նրան հայ մշակույթի մեջ։

Մեր օրերում ևս բարձր գնահատելով Հովհ. Այվազովսկու տեղը և նշանակությունը հայկական ազգային գեղարվեստական մշակույթի պատմության մեջ, նրա փառավոր անունը երկաթագիր տառերով փորագրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատերի վրա՝ հայ բազմադարյան մշակույթի նշանավոր գործիչների հավերժ հիշվող անունների շարքում։

---

[10] Н. Барсамов, И. К. Айвазовский, 1953, стр. 264—265, նույնը 1962, стр. 197.

М. С. САРГСЯН

МЕСТО И ЗНАЧЕНИЕ АЙВАЗОВСКОГО В ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЖИВОПИСИ XIX ВЕКА

Резюме

Великий сын армянского народа, всемирно известный маринист Ованес (Иван) Константинович Айвазовский, занимает большое место в истории армянской живописи XIX века.

Ованес Айвазовский положил начало армянской маринистической живописи. Им создано шесть тысяч полотен, основную часть которых составляют морские пейзажи. Он написал моря, океаны, озера и реки разных стран. Это характерно для армянского изобразительного искусства и вообще для национальной художественной культуры XIX века.

Историческая судьба армянского народа сложилась так, что многие лучшие представители его, и среди них деятели культуры, были вынуждены жить и творить вне пределов своей родины. Это обстоятельство наложило свой отпечаток, в частности, и на армянскую живопись. Почти все армянские художники, наряду с изображением родной природы, создавали картины, изображая природу разных стран. Но их произведения, несмотря на различие их творческих индивидуальностей, как и произведения Айвазовского, входят в армянское изобразительное искусство, составляя его органическую часть.

Одновременно Айвазовский вошел в историю русского и мирового изобразительного искусства как великий национальный художник, гениальные творения которого сыграли огромную роль в развитии маринистической живописи народов мира.

Ованес Айвазовский не только основал новый жанр марины в армянской живописи, но и позаботился о подготовке новых кадров маринистов из художников-армян. В художественной мастерской в Феодосии из обучавшихся у него молодых армян — Эммануэл Магдесян (1857—1908) впоследствии стал крупным маринистом. В 1895 году в Симферополе была организована персональная выставка 150 его картин. Благодаря благотворному влиянию великого сына армянского народа и его отеческой заботе в XIX в. в армянском изобразительном искусстве появилась целая группа художников-маринистов — М. Дживанян, Эм. Магдесян, В. Махохян, А. Шабанян, К. Адамян, Г. Башинджагян, П. Терлемезян и многие другие, лучшие произведения которых обогащают и расширяют одну из самостоятельных отраслей пейзажного жанра — маринистической живописи в национальном искусстве Армении.

Велико значение Айвазовского в деле создания картин на армянские темы. Великий художник писал пейзажи родной природы («Арарат», 1868, «Озеро Севан», 1868, «Долина горы Арарат», 1882, «Арарат», 1887 и др.), сюжетные картины из жизни и быта армянского народа («Тифлис», 1868, «Избиение армян в Трапезунде в 1895 году», Армян погружают на корабль», «Турки сбрасывают армян в Мраморное море»), ряд

полотен на исторические темы («Крещение армянского народа», 1892, «Клятва», «Посещение Байроном Мхитаристов на острове св. Лазаря»), портреты армян и т. д. Эти произведения Айвазовского обогатили бытовую и историческую живопись в армянском изобразительном искусстве XIX века. Под многими картинами разных лет Айвазовский подписывался по-армянски Այվազեան (Айвазян), подчеркивая этим свою национальную принадлежность. К сожалению, в изданной на русском языке литературе об Айвазовском об этом не упоминалось и не исллюстрировались его картины на армянские темы.

Великие заслуги Ованеса Айвазовского перед своим родным народом высоко были оценены современными выдающимися деятелями армянской культуры. Акоп Паронян в своей статье «Ованес Айвазовский» в 1874 году писал, что «Айвазовский — слава армян». Ов. Туманян посвятил ему и его произведениям два стихотворения («Перед картиной Айвазовского», 1893, и «Перед картиной Айвазовского «Побережье Черного моря»). Ал. Цатурян называл его «поэтом моря», считал его «одним из титанов мира». О великом сыне армянского народа, занимавшего большое место в армянском искусстве, высказывались и писали также Г. Ахвердян, Г. Агаян, П. Адамян, Гр. Арцруни, Ширванзаде, Лео, Е. Шахазиз, А. Арменян, Г. Башинджагян, В. Суренян и многие другие. Большинство из них были лично знакомы с художником. Некоторые поэты под влиянием его морских пейзажей писали песни о море.

И в наши дни, благодарный армянский народ, высоко оценив значение великого художника в деле развития национальной живописи, увековечил его имя на стенах Академии наук Армянской ССР, наряду с именами выдающихся деятелей армянской национальной культуры.